ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<18> մայիսի 2016թ. N 81-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻՇԱՅԻ ՄՈՒՍՈՅԱՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 17-ի N 4 որոշումը և նույն հանձնաժողովի եզրակացությունն ու Լուսինե Գրիշայի Մուսոյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1. 2016 թվականի մայիսի 18-ից Լուսինե Գրիշայի Մուսոյանին՝ 3 տարի ժամկետով, նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ